ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության քննչական գլխավոր վարչության Գեղարքունիքի մարզի քննչական բաժնի Վարդենիսի քննչական բաժանմունքի 2011թ. հունիսի 16-ի թիվ 7/27-655 գրության հիման վրա ,,Մաքենիսի միջնակարգ դպրոց,, պետական ոչ առևտրային կազմակերպությունում 2010-2011թթ. ֆինանսատնտեսական գործունեության ուսումնասիրություն կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Սաֆարյան Հ. – մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի վարիչ, նախագահ

Ղուլոյան Հ. - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ

Պողոսյան Վ. - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ

2. Հանձնաժողովին՝ 5-օրյա ժամկետում ուսումնասիրության արդյունքները ներկայացնել մարզպետարան:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա. Ղուկասյանին:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ն.ՊՈՂՈՍՅԱՆ